ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Միրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն

1 Ե՞րբ է կառավարել Ռուսա Բ-ն:

1) Ք.ա. 735-714 թթ.
2) Ք.ա. 825-810 թթ.
3) Ք.ա. 786-764 թթ.
4) Ք.ա. 685-645 թթ.

2 Ե՞րբ է հռչակվել Հայաստանի առաջին հանրապետությունը:

1) 1921 թ. սեպտեմբերի 10-ին
2) 1917 թ. մարտի 23-ին
3) 1918 թ. մայիսի 28-ին
4) 1920 թ. հուլիսի 5-ին

3 Ե՞րբ է կառավարել Սմբատ Ա-ն:

1) 1235-1267 թթ.
2) 890-914 թթ.
3) 914-928 թթ.
4) 1011-1020 թթ.

4 Ե՞րբ է ընդունվել Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրությունը:

1) 1995 թ. հուլիսի 5-ին
2) 1991 թ. սեպտեմբերի 21-ին
3) 1992 թ. մայիսի 9-ին
4) 1994 թ. հունվարի 18-ին

5 Ո՞րը Մեծ Հայքի նահանգ չէ:

1) Տայքը
2) Վասպուրականը
3) Տուրուբերանը
4) Տարոնը

6 Որքա՞ն էր կազմում Փոքր Հայքի թագավորության տարածքն ամենաընդարձակ ժամանակաշրջանում:

1) շուրջ 420 հազար քառ.կմ
2) շուրջ 300 հազար քառ.կմ
3) շուրջ 250 հազար քառ.կմ
4) շուրջ 80 հազար քառ.կմ

2011 թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Հայոց պատմություն

Եղե՛ք ուշադիր *Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Առաջադրանքի համարը

21		26	
22		27	
23		28	
24		29	
25		30	

31.

1	
2	
3	
4	
5	
6	
7	

Միայն նշված պատասխանները փոխելու տեղը

1	☐	☐	
2	☐	☐	
3	☐	☐	
4	☐	☐	

Փոխված պատասխանների քանակը ☐

☐☐.☐ _____

32.

1 .....

.....

.....

2 .....

.....

.....

3 .....

.....

.....

Լրացնում է ստուգողը

Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքների միավորները

31 ☐ 32 ☐

Միավորների գումարը	
Գնահատականը	

Հանձնաժողովի անդամներ՝

1. .....
2. .....

Հանձնաժողովի նախագահ՝

.....

7 **Ո՞րն է Առաքել Դավրիժեցու աշխատությունը:**

1) «Պատմություն»-ը
2) «Աշխարհացույց»-ը
3) «Տիեզերական պատմություն»-ը
4) «Եղծ աղանդոց»-ը

8 **Ո՞վ էր առաջին հայ տպագրիչը:**

1) Միքայել Սեբաստացին
2) Հակոբ Մեղապարտը
3) Աբգար Թոխատեցին
4) Շահամիր Շահամիրյանը

9 **Տրվածներից որի՞ ստեղծման տարեթիվն է 1918 թվականը:**

1) Անդրկովկասյան Սեյմի
2) «Աստրախանի հայոց դատաստանագրքի»
3) Երևանի թեմական դպրոցի
4) ՕզաԿոմ-ի

10 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ:**

ա. Դվնի կառուցումը
բ. Թիգլաթպալասար Գ-ի արշավանքն Ուրարտու
գ. Ամասիայի պայմանագիրը
դ. Կիլիկյան Հայաստանի կործանումը

1) գ, դ, ա, բ
2) ա, բ, գ, դ
3) դ, գ, բ, ա
4) բ, ա, դ, գ

11 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ:**

ա. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը
բ. Սևրի հաշտության պայմանագրի կնքումը
գ. Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի կնքումը
դ. ԽՍՀՄ կազմավորումը

1) դ, գ, ա, բ
2) գ, բ, դ, ա
3) ա, բ, գ, դ
4) բ, ա, դ, գ

12 **Պատմական գործիչների անունները դասավորե՛ք ըստ նրանց գործունեության ժամանակագրության:**

ա. Ավետիս Ահարոնյան
բ. Նելսոն Ստեփանյան
գ. Անտոն Քոչինյան
դ. Արկադի Տեր-Թադևոսյան

1) դ, ա, բ, գ
2) ա, բ, գ, դ
3) բ, ա, դ, գ
4) գ, բ, ա, դ

13 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ:**

ա. Հայկական մարզի ստեղծումը
բ. Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադրումը
գ. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը
դ. Մոսկվայի պայմանագրի կնքումը

1) դ, գ, ա, բ
2) գ, դ, ա, բ
3) բ, ա, գ, դ
4) ա, բ, գ, դ

14 **Արքաների անունները համապատասխանեցրե՛ք իրենց արքայատոհմերին:**

1. Արտաշես Բ	ա. Արշակունի
2. Պապ	բ. Ռուբինյան
3. Գագիկ Ա	գ. Բագրատունի
4. Լևոն Բ	դ. Արտաշեսյան

1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

15 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցրե՛ք տարեթվերին:**

1. Ալեքսանդրապոլի պայմանագիր	ա. 1828 թ.
2. Մոսկվայի պայմանագիր	բ. 1920 թ.
3. Թուրքմենչայի պայմանագիր	գ. 1921 թ.
4. Սան Ստեֆանոյի պայմանագիր	դ. 1878 թ.

1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

32 **Պատասխանե՛ք հարցերին՝ յուրաքանչյուրը մեկ-երկու նախադասության սահմաններում:**

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը դրվեց:

1. Ի՞նչ էր նշվում հռչակագրի քաղաքական բաժնում:

*1)*_____

_____

_____*:*

2. Ի՞նչ էր նշվում հռչակագրի տնտեսական բաժնում:

*2)*_____

_____

_____*.*

3. Ի՞նչ էր նշվում հռչակագրի մշակութային բաժնում:

*3)*_____

_____

_____*:*

16 **Պատմական գործիչների անունները համապատասխանեցրե՛ք իրենց զբաղեցրած պաշտոններին:**

1. Համազասպ Օհանջանյան	ա. խորհրդարանի փոխխոսնակ
2. Թովմաս Նազարբեկյան	բ. վարչապետ
3. Լևոն Շանթ	գ. ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ
4. Ալեքսանդր Մյասնիկյան	դ. բանակի գլխավոր հրամանատար

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
4) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա

17 **ՀԿԿ կենտկոմի քարտուղարների անունները համապատասխանեցրե՛ք իրենց ղեկավարման տարեթվերին:**

1. Գրիգոր Հարությունյան	ա. 1953-1960 թթ.
2. Յակով Զարոբյան	բ. 1960-1966 թթ.
3. Սուրեն Թովմասյան	գ. 1937-1953 թթ.
4. Անտոն Քոչինյան	դ. 1966-1974 թթ.

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
3) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

18 **Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը:**

«Ահա այժմ ես կուրախանամ՝ ոչ փոքր խնդություն զգալով, որ հասնում եմ այն տեղերը, ուր մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում»:

1) Ղազար Փարպեցին
2) Ագաթանգեղոսը
3) Եղիշեն
4) Մովսես Խորենացին

19 **Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը:**

«Զուղայի բոլոր բնակիչները… ելան շահին ընդառաջ, ինչպես վայել է թագավորին…Գետեզրից մինչև Խոջա խաչիկի ապարանքը փռվել էին գորգեր թագավորի ոտքերի տակ…որոնց վրայով թագավորն անցավ գնաց խոջա Խաչիկի տունը»:

1) Միքայել Չամչյանը
2) Կիրակոս Գանձակեցին
3) Ղևոնդ Ալիշանը
4) Առաքել Դավրիժեցին

20 **Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը:**

«Շունչդ տուր, հոգի՛դ տուր, բայց քո հայրենիքը մի՛ տուր թշնամյաց»:

1) Մ. Մեծարենցը
2) Ավ. Իսահակյանը
3) Խ. Աբովյանը
4) Հ. Թումանյանը

21 **Լրացրե՛ք բաց թողնված տեղանունը:**

Հայ-վրացական վիճելի տարածքային հարցը վերջնականորեն լուծվեց նրանով, որ 1921 թ. _____-ի գավառը կցվեց Վրաստանին, իսկ Լոռին միացվեց Հայաստանին:

22 **Լրացրե՛ք բաց թողնված ազգանունը:**

Հայաստանի անկախության հռչակմումից և Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո Թիֆլիսում կազմվեց ՀՀ անդրանիկ կառավարությունը: Այն 1918 թ . հուլիսի երկրորդ կեսին, Հայոց ազգային խորհրդի անդամների հետ միասին, փոխադրվեց մայրաքաղաք Երևան և անմիջապես անցավ գործի: Կառավարության նախագահ (վարչապետ) ընտրվեց _____ (1868-1937):

23 **Լրացրե՛ք բաց թողնված տեղանունը:**

_____-ի կոնֆերանսը կայացավ 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին, մի կողմից՝ Գերմանիայի, Թուրքիայի և մյուս կողմից՝ Անտանտի ու դաշնակցային պետությունների միջև:

24 **Լրացրե՛ք բաց թողնված անունը:**

Հայկական զորամիավորումների ստեղծման գործում մեծ դեր կատարեցին Հայոց ազգային խորհուրդը, Արևմտահայ ապահովության մարմինը, Բաքվի և Երևանի Հայ ազգային խորհուրդները: Վերջինս գլխավորում էր _____-ը, ով ավելի ուշ ստանձնեց Երևանի նահանգի դիկտատորի պարտականությունները:

25 **Լրացրե՛ք բաց թողնված տեղանունը:**

Թուրք զավթիչների դեմ պայքարի հարցում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները միակամ էին: 1918 թ. ապրիլին _____-ում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացավ հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցություն, որտեղ որոշվեց «բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը»:

26 **Լրացրե՛ք բաց թողնված տեղանունը:**

Աստղագիտության բնագավառում կատարվող ուսումնասիրությունները լայն ճանաչման արժանացան: _____-ի աստղադիտարանը ակադեմիկոս Վ. Համբարձումյանի գլխավորությամբ դարձավ համաշխարհային հնչեղություն ունեցող աստղագիտության կենտրոն:

27 **Լրացրե՛ք բաց թողնված թիվը:**

Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայերի ընդհանուր թիվը հասնում է _____ հազարի:

28 **Լրացրե՛ք բաց թողնված տարեթիվը:**

Քաղաքացիական կռիվների ավարտից հետո Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ եղավ քայքայված տնտեսության վերականգնման գործին: Դրան ծառայելու եկավ Նոր տնտեսական քաղաքականությունը (Նեպ): Այն իրականացվել էր Ռուսաստանում _____ թ., այն բանից հետո, երբ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը ճգնաժամային իրադրություն էր ստեղծել ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնագավառում:

29 **Լրացրե՛ք բաց թողնված անունը:**

Արցախի ազատամարտիկները գնդապետ _____-ի գլխավորությամբ հաջողությամբ իրականացրին մարտական գործողությունները և մայիսի 9-ին ազատագրեցին Շուշին:

30 **Լրացրե՛ք բաց թողնված անունը:**

_____-ն հնագույն և ամենախոշոր բարեգործական կազմակերպությունն է սփյուռքում, որի հիմնադիրն (1906թ.) ու առաջին նախագահը եգիպտահայ ազգային գործիչ Պողոս Նուբարն է եղել:

31 **Լրացրե՛ք բաց թողնված անունները ու տարեթվերը:**

1) _____ թ. ընտրություններից հետո իշխանությունների ու հասարակության միջև սկսվեց որոշ օտարացում: Այդ քաղաքական ճգնաժամը հասցրեց 2) _____ թ. փետրվարին 3)_____-ի հրաժարականին: 1998 թ. 4) _____ ամսին արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ հիմնական պայքարն ընթանում էր Հայաստանի Հանրապետության վարչապետ 5) _____-ի և քաղաքական ասպարեզ վերադարձած ՀՀԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար 6)_____-ի միջև: Հանրապետության նախագահ ընտրվեց 7)_____-ը: